

# ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ԴՐՍԵՒՈՐՄԱՆ ԱՌԱՆՉՆԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՌՈՆԵՐՈՒՄ

ՎԻԿՏՈՐ Լ. ԿԱԾՎԱԼԵԱՆ

Հայ բարբառագիտութեան համար ձեւալին, ձեւաբանական եւ կիրառական առումներով որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում ցուցական այս, այդ, այն եւ սա, զա, նա դերանունների բարբառային դրսեւորումները: Այսերով խօսքում առաւել գործածական միաւորներ՝ նրանց դիտարկման չորսիւ յաճախ կարելի է պարզաբանել ինչպէս բարբառների փոխարքերութիւններին, այնպէս էլ լեզուի պատմութեանը վերաբերող մի շարք հարցեր: Ընդհանրապէս այդ դերանունները թէ՛ հայերէնի զարդացման տարրեր չըջաններում, թէ՛ բարբառներում ունեն բազմազան արտայալութիւններ, բայց դրանց բոլորի համար ընդհանուր են արմատական ս, դ(տ), և հնչիւնները եւ դերանուանական համապատասխան իմաստները:

Գրաբարում ցուցական դերանունները ենթարկուում էին գերանուանական հոլովման՝ եզակի սեռական եւ տրական հոլովներում ունենալով տարրեր ձեւեր: Սա, զա, նա դերանունները եզակի սեռականում աւարտում էին սո, դո, նո հմքերի վրայ աւելացող բա խմբով (սորա, դորա, նորա), անկախ էին եւ գոյականների հետ չէին գործածուում: Խոկ այս, այդ, այն դերանունները եզակի սեռականում աւարտում էին ը հոլովակազմիչով կամ որ խմբին յաջորդող իկ մասնիկով (այսր, այսորիկ, այդր, այդորիկ, այնր, այնորիկ), գոյականների հետ գործածուում էին Միջին հայերէնում ցուցականների սեռականն ու տրականը արդէն տարրեր ձեւեր չունէին եւ ունէին նոյն՝ ը հոլովակազմիչը, խոկ միւս հոլովները կազմուում էին տրականից (օրինակ՝ ուղղ. այս, սեռ. եւ տր. այտոր, բաց. յայսոր): Այս չըջանում այս, այդ, այն, սա, զա, նա դերանունների հետ գործառում էին նաև իսա, իդա (իտա), ինա ցուցականները, որոնք ունէին միայն ուղղական եւ հայցական հոլովներ:

Բոլոր բարբառներում գոյութիւն ունեն այս, այդ, այն գերանունների համապատասխան ձեւեր, խոկ սա, զա, նա դերանունների ձեւեր շատ բարբառներում չկան<sup>2</sup>: Նաև այս, այդ, այն դերանունների բարբառային ձեւերը աւելի բազմութեամբ, եւ քերականական յատկանիշներով:

Իհարկէ, մէկ յօլուածի շրջանակներում հնարաւոր չէ դիտարկել ցուցական դերանունների բարբառային բոլոր դրսեւորումները եւ դրանց բոլոր յատկանիշները, բայց միւս կողմից՝ բարբառային իրողութիւնների հետազոտումը աւելի արդիւաչական եւ մեկնաբանութիւնը անմիտ հաւաստի կարող է մենք տարրեր բարբառախմբերի բարբառների տուեալների համադրմամբ եւ համեմատութեամբ, ուստի ցուցական դերանունների բարբառային ձեւերի որոշ առանձնայատկութիւններ դիտարկում ենք հիմնականում արեւելեան խմբակցութեան Արարատեան, Բայազէտի, Խիադինի, Մշոյ Մարաղայի եւ արեւելեան խմբակցութեան Վանի, Դիակունի, Մշոյ բարբառների, առանձին դէպքերում նաև այլ բարբառների ընձեռած նիւթի շրջանակներում:

Ցուցական դերանունների բարբառային խրայտկութիւնները դրսեւորւմ են նախ եւ առաջ ուղիղ ձեւերում, հոլովուելիս՝ նաև սեռականի ձեւերում, որոնցից էլ Համապատասխան վերջաւորութիւններով կազմւում են մշացած հոլովաճեւերը: Հետեւաբար, այդ դերանունների ձեւալին եւ ձեւաբանական հիմնական յատկանիշները դիտարկւում են հենց ուղիղ եւ սեռականի ձեւերի համադրմամբ:

Վերոյիշեալ բարբառներում ցուցականներն ունեն հետեւեալ ուղիղ ձեւերը: Արարատեան բարբառ՝ էս, էտ, էն/սա, դա, նա, Բայազէտի բարբառ՝ էս, էտ, էն/էսի, էտի, էնի/էսիկ, էտիկ, էնիկ/էսա, էտա, էնա/էսակ, էտակ, էնակ, Խոյ-Մարաղայի՝ էտ, էն/էտիկ, էնիկ, Վանի՝ էս, էսի/էտ, էտի/էն, էնի/էսա, էտա, էնա/էսիկ, էտիկ, էնիկ, Մշոյ՝ իդա, ինա/ըդի, ընի, Դիադինի՝ էս, էտ, էն/էսի, էտի, էնի/էսան, էտան, էնան:

Ինչպէս երեւում է, միայն Արարատեան բարբառն ունի սա, դա, նա ձեւերը<sup>3</sup>, մինչդեռ բոլոր բարբառներն էլ ունեն այս, այդ, այն խմբի համապատասխանութիւնները՝ էս, էտ, էն հիմքերով: Մշոյ բարբառի ձեւերը առանձնանում են բառասկզբի ճայնաւորի տարբերութեամբ՝ իդա, ինա, ըդի, ինի-Խոյ-Մարաղայի եւ Մշոյ բարբառներում այս ցուցական դերանուան իմաստով յատուկ ձեւեր չկան, որ սակայն, չի նշանակում նաև խմաստի բացակայութիւն: Էտ, էտիկ ձեւերը Խոյ-Մարաղայի բարբառում եւ իդա, ըդի դերանունները Մշոյ բարբառում գործառում են նաև այս դերանուան իմաստով:

Այս, այդ, այն ցուցականների զուգահեռները բարբառներում հանդէս են բերում կազմութեան զանազանութիւններ: Դրանք կամ պարզ են, կամ յաւելուածաւոր: Ըստ այդմ՝ դիտարկուող բարբառները բաժանում են երեք խմբի: ա) Միայն պարզ կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Արարատեան բարբառը (էս, էտ, էն):

բ) Միայն յաւելուածաւոր կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Մշոյ բարբառը (իդա, ինա, ըդի, ընի):

գ) Եւ պարզ, Եւ յաւելուածաւոր կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի եւ Բայազէտի բարբառները (էս, էսա, էսի, էսիկ, էսակ, էսան):

Դիտարկումները ցոյց են տալիս, որ դերանուանական յաւելուածները բարբառներում կարող են ունենալ տարբեր դեր: -

Ա յաւելուածը ունենում է սոսկ խմաստացին՝ ցուցականութիւնը ընդգծող արժէք<sup>4</sup>: Այստեղ Եւ էս, էտ, էն ձեւերը, Եւ էսա, էտա, էնա ձեւերը խօսքում դառնում են միայն որոշիչ եւ չեն հոլովակում (էս գ'իրքը վէցցա - էսա գ'իրքը վէցցա), այսինքն՝ ունեն ածականական գործածութիւն:

Ի կամ իկ, ակ յաւելուած ունեցող ձեւերը իրենց դրսեւորում են սա, դա, նա դերանունների օրինակով եւ խմաստով: Ունեն միայն գոյականական գործածութիւն: Արանք խօսքում որոշիչ չեն դառնում, ի յաւելուածով ձեւերը հոլովակում են եւ կատարում գոյականին յատուկ դերեր, իսկ իկ կամ ակ յաւելուածով ձեւերը գործածում են միայն եզակի ուղղական եւ հայցական հոլովներով (էտիկ հնագաւա, էտիկ դ'ի տեղը, էտակ էժուում, էտակ տու ընձի): Ի դէպ, Հրաշեալ Աճառեանը նկատել է, որ հայերէնի բարբառներում իկ ունեցող բոլոր ցուցականներն էլ չեն հոլովակում եւ յոգնակի չունեն, եւ տուել է հետեւեալ բացատրութիւնը: «Իկ նշանը դրսեւ է դերանունը ածականի հետ շփորելու

համար. շփորութիւնը կարող է տեղի ունենալ միմիայն եզակի և անհողով դէպարտ, այն է՝ եզ. ուղ. և հյց. հետևարք -իկ մասնիկը դրում է միայն այս դէպարտ, որիչ խօսրով՝ անհողով է»<sup>6</sup>:

Բարբառներում դերանունների գործառական իւրայատկութիւններին անդրադարձում՝ Աճառեանը նշում է, որ ցուցական դերանունները կարող են ունենալ ինչպէս դերանուանական, այնպէս էլ ածականական կիրառութիւն, այսինքն՝ խօսքում կարող են հանդէս գալ նաև իրեւ որոշիչ։ Ըստ նրա՝ Հայութինի բարբառները պարզ ձեւերը (այս, սա) դարձել են ածական (այսինքն՝ որոշչային կիրառութիւն ունեցող), իսկ սրանց վրայ աւելացնելով իկ յաւելուածը՝ վերածել են զերանուան, որտեղից էլ վերջածայն կի կրնատումով առաջացել են իով աւարտուող ձեւերը, ինչպէս՝ ասիկ-ասի, աղիկ-աղի, անիկ-անի/ իսիկ-իսի, իդիկ-իդի, ինիկ-ինի եւն։<sup>7</sup> Բարբառային ցուցականների իկ յաւելուածը, կարծում ենք, առնչում է գրաբարեն այս, այդ, այն ցուցական դերանունների հորդական երկար ձեւերում հանդէս եկող իկին (այս, այսորիկ, այսմիկ, այսորիկ, այսորիկ եւն). Այդ մասին դիտողութիւն ունի նաև Գէորգ Զահուկեանը՝ «Յուցական դերանունների իկը ամենայն հայանականորենամբ իհն հայերէնի համապատասխան ծնւերի մնացորդն է»<sup>8</sup>:

Բարբառներում ցուցականները եւ դրանց սեռական հոլովածեւերը երեւան են հանում հետեւեալ պատկերը.

Վանի բարբառ.

Եղակի

Ուղղ. էս, էսի, էսա էտ, էտի, էտա էն, էնի, էնա

Սեռ. իսոր իսոր ինոր

Ցողնակի

Ուղղ. իսոնք իսոնք ինոնք

Սեռ. իսոնց իսոնց ինոնց

Մշոյ բարբառ

Եղակի

Ուղղ. - իդա ինա ընի

Սեռ. - իդոր ընդոր ընդորա

Ցողնակի

Ուղղ. - իդոնք ընդոնք ընդոնք

Սեռ. - իդոնց ընդոնց ընդոնց

Խոյ-Մարազայի բարբառ

Եղակի

Ուղղ. - էտ, էտիկը էն, էնիկը

Սեռ. - տԱլը դԱլը

Ցողնակի

Ուղղ. - տԱնքը, տԱնքիկը դԱնքը, դԱնքիկը

Սեռ. տԱնց դԱնց

Դիագինի բարբառ.

Եղակի

Ուղղ. էսան էտան էնան

Սեռ. ըստոր ըստոր ընդոր

Ցողնակի

Ուղղ. (է)ըստոնքք (է)ըստոնքք (է)ընդոնքք

Սեռ. (է)ըստոնց (է)ըստոնց (է)ընդոնց

Արարատեան բարբառ.

Եզակի

Ուղղ. էս էտ էն

Սեռ. (է)ըստուր (է)ըստուր (է)ընդուր

Յոգնակի

Ուղղ. (է)ըստօնքք (է)ըստօնքք (է)ընդօնքք

Սեռ. (է)ըստօնց (է)ըստօնց (է)ընդօնց

Բայազէտի բարբառ.

Եզակի

Ուղղ. էսի էտի էնի

Սեռ. ըստու ըստու ընդու

Յոգնակի

Ուղղ. /ը/ստոնքք ըստոնքք ընդոնքք

Սեռ. /ը/ստոնց ըստոնց ընդոնց

Դերանունների սեռական հոլովածեւերը բարբառներում ունեն ինչպէս ընդհանրութիւններ, այնպէս էլ տարբերութիւններ: Նախ եւ առաջ նկատելի է եզակի թուի այդ հոլովում ը հոլովակազմից առկայութիւնը բոլոր բարբառներում (փառը, իդոր, տԱՌ, ըստոր, ըստուր), բացի Բայազէտի բարբառից: Ընդհանրապէս Հայերէնում դերանունների հոլովման մէջ սեռականում ը հոլովակազմից տարբածուած իրողութիւն է (մենք-մեր, գուք-ձեր, ինք-իր, սասորա, զա-դորա, նա-նորա, սոյն-սորին, դոյն-դորին, նոյն-նորին, այս-այսր, այսորիկ, ո-ոյր, զի՞-է՞ր, ոմն-ուրումն, ոբ-ուրութ, իմն-իրիթ), հետեւաբար՝ դիտարկուող ձեւերում թի առկայութիւնը հայերէնի գերանուանական համակարգին բնորոշ ընդհանուր իրողութեան արտայայտութիւն է: Թերեւս Բայազէտի բարբառում ցուցականների եզակի սեռականում տեղի է ունեցել թի անկում, մանաւանդ որ Արարատեան բարբառի համապատասխան ձեւերը Բայազէտի բարբառի ձեւերից տարբերում են միայն թի առկայութեամբ՝ բառուր, բառուր, ընդուր (Արտ.) - ըստու, ըստու, ընդուր (Բյզմ.): Այդ անկմանը հաւանաբար նպաստել է այն, որ դերանունները ուղիղ ձեւում աւարտուել են ի հայեւով (էսիկ, էտիկ, էնիկ>էսի, էտի, էնի)՝ այդպիսով նմանուելով ՈՒ հոլովման ենթարկուող բառերին եւ հոլովուելով դրանց պէս:

Այսպիսով, դիտարկուող բարբառներում ցուցական միշեալ դերանունները եզակիում ենթարկում են դերանուանական հոլովման, բացառութեամբ Բայազէտի բարբառի, որտեղ գրանք ենթարկում են անուանական ՈՒ հոլովման: Յոգնակիում ցուցականները բոլոր բարբառներում ենթարկում են Ց առաջական հոլովման:

Եթէ մի կողմ թողնենք Բայազէտի բարբառի ձեւերը, միւս բարբառներում ցուցականները եզակի սեռականում ունենում են որ, ուր մասնիկներ Վանի, Մշոյ եւ Դիազինի բարբառներում հանդէս է գալիս որ մասնիկը (փառը, իդոր, ըստոր), Արարատեան բարբառում ուր մասնիկը՝ Կարծում ենք՝ այս երկու մասնիկներն էլ առնչում են գրաբարեան որ մասնիկին (այսորիկ, այդորիկ, այնորիկ): Ի դէպ, ժամանակին համանման կարծիք Վանի բարբառի ձեւերի

վերաբերեալ յայտնել է Արարատ Ղարիբեանը. «սեռականը ստանում է «որ» վերջաւորութինը, որ գտնում ենք զրարարեան սորա, դորա, նորա, այսորիկ, այնորիկ ծննդի մէջ»<sup>9</sup>: Թւում է՝ Արարատեան բարրառում որի դիմաց ուր մասնիկի դրսեւորումը արդիւնք է ՈՒ Հողովման ազդեցութեան, մանաւանդ եթէ նկատի ունենանք բացառականի ձեւը՝ ըստուց:

Ինչ վերաբերում է Խոյ-Մարադայի բարբառի տԱլը, դԱլը սեռականներին, ապա դրանք ստացել են տարբեր մեկնարանութիւններ: Աճառեանը գտնում է, որ այդ սեռականները կազմւում են ոչ թէ ուղղականի էտ, էտիկէն, էնիկէ ձեւերից, այլ սա, դա, նա զերանուններից<sup>10</sup>: Հաս նրա՝ որոշ բարբառներում վիճակս նաև Մարադայում<sup>11</sup> սա, դա, նա զերանունների սորա, դորա, նորա սեռականներում ո ձայնաւորը վերածուել է ափ, ու առաջացել են սարա, դարա, նարա ձեւեր, որոնց վերջաձայն ափ անկումով էլ ձեւացել են Մարադայի տԱլը, նԱլը (դրա, նրա) ձեւերը: Միւս կողմից՝ Աճառեանը գտնում է, որ նա զերանուան նրա սեռականնում դ հնչիւնի յաւելումով ստացուել է նդրա, ապա ընդրա, եւ այդպէս ձեւացել են ոչ միայն Ղարաբաղի բարբառի ընդրա, ընդրան ձեւերը, այլ նաև Մարադայի ինդար, ինդԱլը, ինդԱլ՛ն ձեւերը, իսկ ին մասի անկումով էլ ստացուել է Ուրմիայի դԱլը ձեւը<sup>12</sup>: Այլ տեսակէտ ունի Ղարիբեանը, որը Ուրմիայի բարբառի էն զերանուան դԱլը սեռականը բիշեցնում է նախնական ամբողջական էնդԱլը ձեւից, որի ն Հնչիւնի ձայնեղացնող յատկութեամբ էլ պարմանաւորում է բառասկզբում ձայնեղ չունեցող բարբառում դԱլը ձեւի սկզբում ձայնեղ զի առկայութիւնը<sup>13</sup>:

Մենք կարծում ենք, որ Խոյ-Մարադայի բարբառում զերանունների սեռական հողովաճեւերը (տԱլը, դԱլը) իրենց կազմում ունեն Պը բաղադրիչը, որը համապատասխանում է այլ բարբառների որ մասնիկին (հնարաւոր է՝ այս բարբառում որոշ դէպֆերում ո՞շա հնչիւնափոխութեան միտում է եղել, եթէ նկատի ունենանք ովդՎԱլը, ջոկ-հՆԱլը օրինակները): Նախնական ամբողջական ձեւերի սկզբում տեղի ունեցած հնչիւնական անկումների արդիւնքում էլ առաջացել են Մարադայի տԱլը, նԱլը եւ Ուրմիայի տԱլը, դԱլը ձեւերը: Մեր կարծիքով, դիտարկուող սեռականները ոչ թէ դա, նա, այլ էտ, էն զերանուանների ձեւերն են: Այս տեսակէտը պնդելու համար ունենք հնչտեսալ փաստարկ-ները:

ա) Բարբառներում, որպէս կանոն, իկ յաւելուած ստանում են էս, էտ, էն (այս, այդ, այն) ցուցականները: Խոյ-Մարադայի բարբառում իկ յաւելուածով զուգահեռ ձեւեր դրսեւորում են ոչ միայն եղակի ուղղականում (էտ, էտիկէ, էն, էնիկէ), այլ նաև այլ Հողովներում, ինչպէս՝ ար, հայց, տԱլը-տարիկէը, դԱլը-դԱլիկէը, բաց-տԱլէն-տԱլիկէն, դԱլէն-դԱլիկէն, գործ-տԱլօվիկէով, դԱլօվ-դԱլիկէով, եւ ինչպէս տեսնում ենք, բոյրում էլ պահպանում է ը հողովակազմիչը: Ճիշտ է, սա, դա, նա զերանունները եւս առանձին բարբառներում երբեմն ունենում են յաւելուածաւոր ձեւեր (սայիկա, դայիկա, նայիկա, սվիկա, դվիկա, նվիկա, սավիկա, դավիկա, նավիկա եւն-), բայց սրանց սակաւադէպ յաւելուածաւոր թեք հողովաճեւերը իրենց կազմում երբեք ը չեն ունենում (դավդէ, դագէց, դրգէց, նագէ, նգէ, նվգէ՝ Պլւ., սադից՝ Ննիւ.): այսինքն՝ սեռական-տրականից չեն կազմւում:

բ) Թէ՛ գրաբարում, թէ՛ միջին հայերէնում եւ թէ՛ բարբառներում այս, այդ, այն, էս, էտ, էն ցուցականների յողնակի ուղղականը կազմւում է եղակի

ուղղականից, ուստի այդտեղ բացակարում է սեռականի թ հոլովակազմիչը (այսք, այսոքիկ, այսոք, էստոնք, բատոնք, էստոնք, աստոնք, խօնք, խոնք, ըստոնք, Ամիլոնք, ասօնք եւն, Խոյ-Մարադայի բարբառում տԱնքը, տԱնքիիկ, դԱնքը, դանքիիկ), մինչդեռ սա, դա, նա գերանունների յոդնակի ուղղականը բարբառներում եւ գրական արեւելահայրէնում, ի տարրերութիւն գրաբարի, որպէս կանոն կազմում է եղակի տրականից, ուստի իր մէջ ունի սեռական-տրականի ըն, ինչպէս՝ նրա-նրան-նրանք (Թբ., Շմի.), արա-տրան-տրանք (Աստրին.), սօ(սա)-սրո-սրուք (Ազգու.): Բացառութիւն են, օրինակ, Պոլսի եւ Նոր Նախիջեւանի բարբառները, որոնցում սա, դա, նա գերանունները յոդնակի ուղղականի կազմում թ չունեն. փոխարէնը դրանք կամ ակնյայտօրէն գրաբարատիպ են (ինչպէս՝ սաքա, դաքա, նաքա - Ննին.), կամ իրենց կազմում «ներդաշնակութեան համար»<sup>13</sup> ունեն զ հնչիւն (ինչպէս՝ սափօնք, դափօնք, նափօնք - Պլ.): Ի դէպ, Ննին-ի սաքա, դաքա, նաքա յոդնակինների թեք հոլովներում այնուամենայնի ը հանդիպում է (ինչպէս՝ սեռ.-տր. սարանց, դարանց, նարանց, բաց. սարանցմէն, դարանցմէն, նարանցմօվ, գործ. սարանցմօվ, դարանցմօվ, նարանցմօվ): Մինչդեռ էս, էտ, էն գերանունները յոդնակիի որեւ հոդովում ոչ մի բարբառում (նաև՝ Խոյ-Մարադայի բարբառում) իրենց կազմում թ չունեն:

Կարելի է նաև պնդել, որ, օրինակ, Մարադայի նԱք սեռականը համապատասխանն է Վանի բարբառի ինոր ձեւի: Այդ է վկայում Մարադայում առկայ զուգահեռ ինդԱք ձեւը՝ դի յաւելումով, իսկ այս ձեւն էլ ակնյայտօրէն համապատասխանում է Մշոյ, Դիադինի բարբառների ընդոր ձեւին:

Անդրագառնալով ցուցականների յոդնակի ուղղականի ձեւերին՝ Աճառեանը գրում է, որ բարբառներում ամենատարածուած ասոնք, աղոնք, անոնք ձեւերի եւ դրանց բոլոր տարրերակինների (փոնք, իդոնք, իսոնք/բսունք, ընունք/ասունք, ադոնք, անոնք եւն-) նախաձեւերն են միջին հայերէնի «այսոր, այդոր, այնոր, օրոնր առաջանուուն են զոր. այսոր, այդոր, այնոր ձեւերից՝ ներդաշնակութեան համար ներմուծելով ո ձայնաւորր», իսկ այնուհետեւ աւելացել է «ս (այտնի, այդոնք, այնոնք)՝ նմանութեամբ բազմարի այլ կարգի յոգնակինների անք, եանք, ունք՝ ինչպէս իկնոնք, շարժմոնք են».<sup>14</sup> Հարկաւ, բոլոր այս ձեւերը՝ թէ՝ գրաբարեան, թէ՝ միջինհայերէնեան եւ թէ՝ բարբառային, միմեանց հետ փոխակազմուած են եւ նոյն իրողութեան տարատեսակ դրսեւորումներն են՝ ներկայացնելով իեզուի զարգացման տարբեր փուլերը: Սակայն համոզիչ չէ միջին հայերէնի եւ բարբառային ձեւերում ո կամ ու ձայնաւորների առկայութիւնը ներդաշնակութեան համար իբրև ձայնաւորական ներմուծում ներկայացնելը: Կարծում ենք՝ աւելի տրամարանական կը լինի միջին հայերէնի, ապա եւ բարբառային ձեւերը առնչակցել գրաբարեան այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ ձեւերին, ինչպէս որ եղակի սեռականի ձեւերը առնչուում են գրաբարի այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ ձեւերին: Թւում է՝ երկու դէպքում էլ բարբառային ձեւերում ո կամ ու ձայնաւորի առկայութիւնը ներդաշնակութեան համար յետագայ ներմուծում չէ, այլ արձագանգն է հնագոյն իրողութեան, որի մասին վկայում է հենց ինքը՝ Աճառեանը: Խօսելով ցուցական այս, այդ, այն գերանունների գրաբարեան կարծ ու երկար ձեւերի մասին՝ նա գրում է: «Երկար ձեւը ունի միշտ -իկ վերջաւորութիւնը, որ պատճառ է դասում նախորդ ձայնաւորի պահպանման.՝ այսպէս՝ երկար ձեւն է

այնորիկ, կարծը՝ այնը, որ առաջացել է նախաւոր \*այնոր ձենից\*,<sup>15</sup> ապա եւ Համաձայնում է Մէյէի տեսակէտի հետ՝ այս, արդ, այն ցուցականների հին արմատներ Համարելով այսո, աբզո, այնո ձեւերը<sup>16</sup>: Ուրեմն, բարբառային ցուցականների թէ՛ եղակի, թէ՛ յոգնակի ձեւերի ոն կամ դրա հնչինափոխուած տարատեսակը պէտք է ընկցնել հենց այդ հին արմատների ո հնչինից եւ ոչ թէ Համարել ներդաշնակութեան Համար ներմուծուած ձայնաւոր:

Ցուցական դերանունների եղակի սեռականում կարեւոր յատկանիշ է տի ներմուծումը Ղարիբեանը նշում է, որ ԿԸ ճիւղի բարբառները «ցուցական դիրամնունների հոլովուած ծնների մէջ տն չն ունենում»<sup>17</sup>: Զահուկեանի բերած փաստերը եւս վկայում էն, որ տի յաւելումը յատուկ է արեւելեան բարբառներին, իսկ արեւմտեաններից այդ յատկանիշն ունեն Մուշն ու Դիազինը<sup>18</sup>: Մեր կողմից դիմարկուող բարբառներում, այսպիսով, տի յաւելում չունի միայն Վանի բարբառը:

Այս յաւելման վերաբերեալ Հայ լեզուաբանութեան մէջ արտաքայտուել են տարրեր տեսակէտներ: Աճառեանը երեւոյթի սկզբնաւորումը ներկայացնում է այսպէս: «Ընդհանոր ձայնաբանական երեսոյ է րուր լեզուների մէջ է՝ դ ատամնականի յաւելումը ն և ր բաղաձայնների միջեւ: հայերնից իրեն օրինակ յիշենք ծանր-ծանրը, նանր-նանրը: Այս օրէնքի համաձայն՝ նրա դարձաւ նրան և հնչման հեշտութեան համար յենարանի յաւելունով՝ ընդուա: Այսպէս ծնացան Ղրք. ընդըռա, ընդըռան, Մոդ. ինդԱր, ինդԱրԱ, ինդԱրԱն ծնենրը»<sup>19</sup>: Այդ նոյն եղանակով, ըստ Աճառեանի, «այն ծնից ոյ յաւելունով առաջացել է \*այնը\*»<sup>20</sup> էնդը. և որովհետեւ վերջածայն երեք բաղաձայնների հանդիպումը դժուար հնչելի երեսոյ է, մէջտեղում աւելացել է ու ձայնաւորը»<sup>21</sup>: Արեւելեան բարբառների արդ ու ձայնաւորին ԿԸ ճիւղի բարբառներում համապատասխանում է ասոր, ատոր, անոր սեռականների ոն: Բայց այդ երկուսի միջեւ Աճառեանը կապ չի տեսնում եւ Համարում է, որ դրանք անկախաբար ներմուծուած են ներդաշնակութեան Համար<sup>22</sup>: Ընդուր ձեւի նմանութեամբ էլ, ըստ Աճառեանի, առաջացել են էստուր, էստուր ձեւերը: Հուսկ, նա այս, արդ, այն (էս, էտ, էն) ցուցականների սեռականների ծագումը ներկայացնում է հետեւեալ կերպ: «Այսպիսով էստուր, էստոր, էսդոր եւ ասոր, ադոր, անոր միննոյն ծնենը են և հաւասարապէս ծագում են զոր. այսը, այդը, այնը ծնենրից, նախաձայնը (այ) դարձնելով մի տեղ է, միւս տեղ ա, և բ բացի սրանից առաջին խճի մէջ ներմուծելով դ, որ ն և ր բաղաձայնների յենարանն է, ինչպէս նաև ներդաշնակութեան համար աւելացնելով մի տեղ ու, միւս տեղ ո»<sup>23</sup>:

Ցուցականների սեռականներում տի ներմուծումը եւ ընդհանրապէս այդ ձեւերի կազմութիւնը բոլորովին այլ կերպ է բացատրում Ղարիբեանը: Նրա կարծիքով՝ «այդ ան առաջ է եկել այն պատճառով, որ նախ հոլովիտ է «այդ» դիրամունը և ապա նրա վրայ աւելացել են այս, այդ և այն դիրամուններն ու կազմել հոլովում, այսինքն՝ էս, տուր, տուր, տով, տում, ապա՝ էս+տոր=էստոր, էս+տուր=էստուր, էս+տով=էստով, էս+տում=էստում»<sup>24</sup>:

Սակայն իր միտքը շարունակելով՝ նա գրում է, թէ ՈՒՄ ճիւղի բարբառներում «ցուցական դիրամունների հոլովման իմբը ընդիանուր հայերէնի «ուա» դիրամուան սեռական ծնեն է, որը նարարադի բարբառում սկզբից ստանում է «էս», «էտ», «էն» ծնենը և կորցնում «ու». էս + դր-

բարբառական էնթակառակը, «տորա» ձեւը կորցնում է «ա»ն և սկզբից անհաջող նոյն էս, էդ, էն. ևս +դորա>էսդոր>էստոր-դատոր>էստոր<sup>24</sup>: Հուսկ, նա եզրակացնում է, որ ՈՒՄ ճիշդի բարբառները «պահել են ընդհանուր հայերէնի այս, այդ, այն դերանունների ուղղական ձեւը՝ կորցնելով միևնուն հոլովները, իսկ սա, դա, նա դերանունների՝ միևնուն հոլովները, կորցնելով ուղղական ձեւը»<sup>25</sup>: Երեւոյթին Հարիբեանը միանչանակ մեկնարանութիւն չի տալիս նաև ԿԸ ճիշդի բարբառների առնչութեամբ: Նախ գրում է, որ այստեղ ցուցական դերանունների սեռականը կազմուում է՝ ուղղականի վրայ աւելացնելով օր, որ, ուր կամ նոյնիսկ ու մերժաւորութիւն<sup>26</sup>: Սակայն քիչ անց անում է ասուածին հակասող հետեւութիւն: «Ուրինն «Ար» ծիսի բարբառների ցուցական դերանունների հոլովունը տարբեր հիմքով է: Այստեղ հոլովնան հիմք են դառնում սա, դա, նա դերանունների սեռական սորա, դորա, նորա ձեւերը, որոնք կորցնում են Վերջին «ա»ն և սկզբից ստանում ես, ես, էն»<sup>27</sup>:

Կարծում ենք՝ բարբառներում թէ՛ ցուցականների սեռականի ձեւերի կազմութիւնն ընդհանրապէս եւ թէ՛ դրանցում տի կամ դի ներմուծումը կարիք ունեն նորովի մեկնարանութեան: Նախ, ինչպէս կարեի է ենթադրել վերն ասուածից, բարբառներում այս, այդ, այն դերանուններին համապատասխանող ձեւերը (էս, էտ, էն, սա, ատ, ան, էսի, էտի, էնի եւն) սեռականում ուղղականի վրայ ստանում են օր, որ, ուր կամ ար վերջաւորութիւն: Դրանք բոլորն էլ, կարծում ենք, առնչուում են գրաբարեան այսր (այդր, այնր) եւ յատկապէս այսորիկ (այդորիկ, այնորիկ) ձեւերին: Այսինքն՝ ցուցական դերանուան՝ բարբառներում հանդիպող սեռականի բոլոր ձեւերը (փոր, իսոր, ինոր, ասոր, ատոր, անոր, ըստուր, ըսուր, ստուր, ստուր, ընդուր, ըսուր, ընուր, անուր, Անիւր, Անդիւր, Անդիւր, ասօր, ատօր, անօր, իսոնք աւարտուում են ու ձայնորդուի<sup>28</sup> եւ նախինթաց որեւէ ձայնաւորով կամ երկրաբառով (օ, ո, ու, Ա, իւ), վերաբերում են այս, այդ, այն դերանուններին, եւ մեզ համար ընդունելի չէ Հարիբեանի այն դժուղութիւնը, թէ այդ ձեւերը (ցուցականների թեք հոլովաձեւերը ընդհանրապէս) վերաբերում են սա, դա, նա դերանուններին: Զէ՛ որ կան բարբառներ, որոնք զուգահեռաբար պահպանել են սա, դա, նա դերանունները, եւ դրանց հոլովաձեւերը կազմութեամբ էականօրէն տարբերուում են էս, էտ, էն դերանունների հոլովաձեւերից՝ այդպիսով եւս մէկ անզամ հաւաստելով մեր պնդումը: Այսպէս, Արարատեան բարբառում սա, դա, նա դերանունները, հենց Հարիբեանի վկայութեամբ, հոլովում են գրականի պէս՝ այսինքն՝ սեռականում ունեն սրա, դրա, նրա ձեւերը, մինչդեռ էս, էտ, էն դերանունների սեռականներն են՝ ըստուր, ըսուր, ընդուր: Բերենք նաև այլ բարբառների դերանունների ուղղական եւ սեռական հոլովների գուգահեռ օրինակներ:

Պոլիս	Թթիլիսի	Ագուլիս	Նոր Նախիջեւան
սա աս	սա էս	սօ աս	սա աս
սրբա ասօր	սրբա էստոր	սրօ աստուր	սարա ասօր

Մշոյ բարբառում ցուցական դերանուան երրորդ դէմքի համար զուգահեռ ինա (այն) եւ ընի (նա) ձեւեր է արձանադրել Ս. Բաղդասարեան-Թափիալց-հանը<sup>29</sup>: Այն եւ նա դերանուններին համապատասխանող այս ձեւերը եզակի թեք

Հոլովներում պահպանել են հոլովական օրինաշափութիւնները. ինա դերածուան սեռականը ունի որ կազմիչը (ընդոր), իսկ ընի դերանուան սեռականն աւարտում է բա խմբով (ընդրա), ինչը հայերինում յատուկ է սա, դա, նա դերանուաններին (սորա, դորա, նորա, սարա, դարա, նարա, սրա, դրա, նրա, ըստըրա, ըստրա, ընդըրա). Յոգնակի թւում այս դերանուանները ձեւաւորման առումով նոյնանում են՝ հանդէս ընի դերերով այն (էն, ինա) դերանուան յատկանիներ, միայն ընի դերանուան դէպքում բառի կազմում կարող է լինել դ կամ ոչ (ընդունց կամ ընոնց), իսկ ինա դերանուան դէպքում զուգաձեւութիւն չկայ (ընդոնց). Ասուութ թոյլ է տալիս հայերէնի բարբառներում այս, այդ, այն եւ սա, դա, նա խմբերի զուգաձեւները որոշելիս նկատի ունենալ հետեւեալ տարբերակիշ յատկանիները.

ա) այս, այդ, այն խմբի դերանուանների սեռական հոլովաձեւերը որպէս կանոն աւարտում են բոլ եւ նախընթաց որեւէ ձայնաւորով կամ երկրարրառով (երբեմն ուկի յետոյ հնարաւոր է բի անկում), իսկ սա, դա, նա խմբի դերանուանների սեռական հոլովաձեւերը աւարտում են բին յաջորդող ձայնաւորով, բ) ցուցականների թեք հոլովներում տ հնչինի ներմուծումը յատուկ է աբ, այդ, այն խումբը ներկայացնող ձեւերին:

Իհարկէ, կան դէպքեր էլ, երբ այս, այդ, այն եւ սա, դա, նա տիպերի դերանուանների թեք ձեւերը ազգել են միմեանց վրայ, կամ էլ, կարելի է ասել, տեղի է ունեցել դերանուանական երկու տիպերի միաձուլում: Ի դէպ, այս, այդ, այն եւ սա, դա, նա դերանուանական խմբերի թէ՛ միաձուլման, թէ՛ փոխադարձ ազդեցութիւնների մի շաքր օրինակներ է բերում Աճառեանը: Այսպէս, ըստ նրա՝ միջին հայերէնի «փսա, իսու, ինա ձեւացել են այս, այդ, այն եւ սա, դա, նա ցուցականների խառնուրդից»<sup>31</sup>, իսկ Պոլսի բարբառում ասօր, ադոր, անոր ձեւերի ազդեցութեամբ առաջացել են սաւի, դաւի, նաւի դերանուանների սավոր, դաւոր, նաւոր սեռականները<sup>32</sup>:

Կարծում ենք՝ դերանուանական երկու խմբերի ազդեցութեան օրինակ է երեւան բերում նաև Ղարաբաղի բարբառը, որտեղ, օրինակ, էս (այս) դերանուանը թեք ձեւերում իրեն ընորոշ տի հետ ունենում է սա ձեւին ընորոշ բախումը.

**Եղակի**  
**Ուղղ. էս**  
**Մեռ. ըստըրա**

**Յոգնակի**  
**ըստըհանք սըհանք ըստըրանք**  
**ըստըհանց սըհանց ըստըրանց**

Փաստօրէն, այս, այդ, այն եւ սա, դա, նա ցուցականների փոխարարերութիւնների առումով հայերէնի բարբառները կարող են ներկայացնել երեք կարգի իրավիճակ.

ա) Ցուցականների երկու տիպերի առկայութիւն՝ իրենց առանձին հոլովաձեւերով: Այսպիսի վիճակ ներկայացնում են, օրինակ, Արարատեան, Թրիլիսիի, Պոլսի, Ագուլիսի, Նոր Նախիճեւանի բարբառները:

բ) Միայն այս, այդ, այն տիպի դերանուաններ ունեցող բարբառներ, ինչպիսիք են, օրինակ, Բայազէտի, Խոյ-Մարաղայի, Վանի, Դիալիսի, ընդհանուր առմամբ նաև Մշոյ բարբառները Նկատենք, որ այս բարբառներում ցուցականի թեք հոլովաձեւերը իրականում արտայայտում են սա, դա, նա ցուցականների իմաստ, իսկ ուղիղ ձեւերը կարող են արտայայտել եւ այս, այդ, այն, եւ սա,

դա, նա ցուցականների իմաստությունը կարբառում եղակի ուղղականում երկու տիպերի ցուցականների իմաստային տարրերութիւնը գրանցուում է ձեւային տարրերութեամբ. այս, այդ, այն գերանունների իմաստը արտայայտում է էս, էտ, էն, էսա, էտա, էնա ձեւերով, իսկ սա, դա, նա դերանունների իմաստը արտայայտում է էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ, էսակ, էտակ, էնակ ձեւերով:

գ) Ցուցականների երկու տիպերի խառնուրդ ունեցող բարբառներ, ինչպիսին է, օրինակ, Ղարաբաղի բարբառը:

Բոլոր դէպֆերում պարզ է, որ նշուած ցուցական գերանունների թեք հոլովաճեւերում միշտ ունեն առարկայական, այսինքն՝ սա, դա, նա գերանունների իմաստ:

Ինչ վերաբերում է ցուցականների թեք հոլովաճեւերում առաջնային պայմանների ներմուծման խնդրին, ապա կասկած չունենք, որ այն հնչիւնական յաւելում է եւ ոչ թէ այդ կամ դա գերանուան հոլովաճեւի արտայայտութիւն: Բայց մենք չենք կարծում, թէ այդ ներմուծումը սկիզբ է առել նրա կամ այնր ձեւերից եւ ապա տարածուել նաեւ միւս ձեւերում:

Բայազէտի բարբառում երեւոյթի դիտարկումը մեզ թոյլ է տալիս ենթադրել, որ էսի եւ էնի գերանունների ըստու եւ ընդու սեռականներում առաջնային յաւելական հնչիւնի առկայութիւնը նախ եւ առաջ հետեւանք է էտի գերանուան ըստու օրինաչափ սեռականի համարանական ազգեցութեան, ընդ որում՝ ընդու ձևում ներմուծուած պայմանականի ձայնեղութիւնը ակնյայտօրէն հետեւանք է ն ձայնորդի ազդեցութեան: Չենք բացառում, որ պայմանականի ներմուծման հարցում կարող է գեր խաղացած մինել եւ այն, որ Բայազէտի բարբառում (ինչպէս եւ այլ բարբառներում) թէ՛ս, թէ՛ն հնչիւններից յատոյ նկատում է տի, դի յաւելման միտում, ինչպէս՝ պէստ (պէս), կԱլբաստ (ուուս-կալբասա), հուսատակ (հուսա), ծԱննդըր (ծանր), մԱննդըր (մանր), սԱննդըր (սանր), թունդիր (թոնիր): Սակայն առաւել կարեւորում ենք մէկ այլ իրողութիւն: Արդի գրական արեւելահայերէնում մենք դիտարկում ենք հնչիւնաբանական հետեւեալ օրինաչափութիւնը՝ միայն ձայնաւորից բաղկացած վանկ հնարաւոր է երեք դէպֆում.

ա) բառասկզբում, եթէ ձայնաւորին յաջորդում է մէկ բաղաձայն (ասել, էջանշան, իմանալ, օտար, ուրախ),

բ) որևէ դիրքում, եթէ բառում իրար են հանդիպում երկու ձայնաւորներ (էի, չի, էսկ, բրէշի, կակառ, լառսի, լառւրա),

գ) միահնիւն բառում (չ, ու):

Գրական արեւելահայերէնում ը ձայնաւորը երբեք մէկ այլ ձայնաւորի չի նախորդում, բառասկզբում մէկ բաղաձայնից առաջ չի հանդիպում եւ առանձին իրու բառ հանդէս չի գալիս, հետեւաբար՝ ըն երբեք ինքնուրոյն վանկ չի գառնում: Այդպէս է եւ Բայազէտի բարբառում: Նշանակում է՝ էսի՛ըսու, էնի՛ընու ձեւերը Բայազէտի բարբառում դառնում են անհնար՝ բարբառի օրէնքներին հակասող վանկակազմութեան (ըսու, ընու) պատճառով: Այս թէ ինչու՝ վիճակը շտկուել է տի ներմուծման միջոցով ըլց յատոյ բաղաձայնական խմբի ձեւաւորումով, ինչին նպաստել են նախորդ երկու հանգամանքները<sup>33</sup>: Մեր դիտարկման նշմարտացիութիւնն է հաւասարում Բայազէտի բարբառի նաեւ հետեւեալ իրողութիւնը՝ երբ էսի, էտի, էնի գերանունների՝ ը ձայնաւո-

բով սկսուող ձեւերում (ըստու, ըստու, ընդու, ըստոնց, ըստոնց, ընդոնց եւն.) առաջին բաղաձայնից յետոյ ներմուծում է ցուցականութիւնն ընդգծող այս-ւելուածը, մէկ բաղաձայնից առաջ դիրքը ըի համար դառնում է անհնար, եւ այն փոխարինում է էով, իսկ նից հետացած դին փոխարինում է նախնական տն՝ էստու, էտատու, էնատու, էտատոնց, էտատոնց, էնատոնց եւն. ի դէպ, համանման իրողութիւն դիտարկում ենք եւ գրաբարում: Այսաէս, երբ գրաբարեան ինն թուականի թեք ձեւերում ի ձայնաւորը շետից զրկում էր, տեղի էր ունենում իշը փոփոխութիւն (ըննի, յըննէ, ըննից), բայց երբ ըն պիտի յայտնուէր մէկ բաղաձայնից առաջ, նման փոփոխութիւն տեղի էր ունենում (ինունք, զինունս):

Բայց էտի բարբառում ցուցականների սեռական հորովածեւերում առաջնալեզուային պայթականի ներմուծման հանգամանքների վերհանումը թոյլ է տալիս նոյն եղակտով նայել այլ բարբառաների իրողութիւններին: Այսաէս, թուում է սիսալուած չենք լինի, եթէ պնդենք, որ Վանի բարբառի խոր, ինոր սեռականներում առաջնալեզուային պայթականի ներմուծումը անհրաժեշտ չի եղել, քանի որ բառասկզբում առկայ է ոչ թէ ը այլ ի: Մինչդեռ Դիադինի եւ Արարատեան բարբառաներում այդ ներմուծումը առկայ է եւ ուղեկցում է բառասկզբի ը ձայնաւորով (ըստոր, ընդոր, ըստուր, ընդուր): Իսկ Մշոյ բարբառում իդա դերանուան իդոր սեռականում մէկ բաղաձայնից առաջ ունենք ի, մինչդեռ ինա դերանուան ընդոր սեռականում իշը փոփոխութիւնն ուղեկցում է պայթականի ներմուծմամբ եւ բաղաձայնական խմբի ձեւարորումով: Բնականաբար, տարբեր բարբառաներում այս, այդ, այն տիպի դերանուանների թեք ձեւերում տ (դ) հնչիւնի ներմուծումը կամ դրա բացակայութիւնը կարող է պատճառաբանուած լինել տարբեր հանգամանքներով, առկայն Բայց էտի եւ այլ բարբառաների իրողութիւնները վկայում են, որ երեւոյթը հիմնականում պէտք է պայմանաւորել տուեալ բարբառի հնչիւնաբանական իւրայսակութիւններով, հնչիւնական փոխազդեցութիւններով:

Ասուածից եզրակացնում ենք, որ հայրէնի բարբառաներում ցուցական դերանուաններին նախընթաց որեւէ ձայնաւորով (կամ երկբարբառով) եւ ըով աւարտուղ սեռականի ձեւերը (նաեւ մնացած բոլոր հորովածեւերը), ինչպէս նաեւ տի ներմուծում ունեցող ձեւերը, որպէս կանոն, վերաբերում են ցուցականների այս, այդ, այն խմբին, իսկ բով եւ նրան յաջորդող ձայնաւորով աւարտուղ սեռականները (նաեւ միւս հորովածեւերը) վերաբերում են ցուցականների սա, դա, նա խմբին: Այս իմաստով ակնյայտ է առնչակցութիւնը գրաբարեան համապատասխան ձեւերին՝ այս-այսր կամ այտորիկ, սա-սորա: Առանձին բարբառաներում դիտարկում են միաձուլուած, ազդեցութիւնների հետեւանքով առաջացած ձեւեր: Այս, այդ, այն ցուցականների բարբառապին ձեւերում (ուղիղ եւ թեք) իրենց արձագանքներն ունեն հայրէտների նշած հնագոյն արմատական ձեւերի ո հնչիւնը, այդ գերանուանների գրաբարեան երկար հորովածեւերի որ եւ իկ կազմիչները: Ինչ վերաբերում է հիմնականում արեւելեան բարբառաներում այս, այն ցուցականների համապատասխան թեք ձեւերում աղ(դ) ներմուծմանը, ապա այն ամենայն հաւանականութեամբ արդիւնք է այդ գերանուան համապատասխան ձեւերի համաբանական ազդեցութեան, որին թերեւ նպաստում են նաեւ բարբառային հնչիւնաբանական որոշակի իրողութիւններ:

## ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Ս. Հազարեան, Հայոց Լեզուի գամառուս Պատմութիւն, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1981, էջ 249:
- <sup>2</sup> Արարատ Հարիբեան, Հայ Բարբառագիտութիւն, Երեւան, Հայկ. ՍՍՌ Պետական Հետակայշ Մանկավարժական Խնադանութ, 1953, էջ 153:
- <sup>3</sup> Այս ձեւերին յատուկ չենք անդրադառնայ, որովհետեւ Արարատեան բարբառում դրանք դրսեւորում են այնպէս, ինչպէս գրական արեւելահայրէնում:
- <sup>4</sup> Հետագրքական է, որ Բայրղչտի բարբառում այսերւածը ցուցականութիւնն ընդգծող դերով ներմուծում է ցուցականների բոլոր հոլովաճեւերում եւ ձեւաւրում է զուգահեռ ձեւեր, ինչպէս՝ ըստու-էսատու, ըստու-էսատուց, ըստուք-էսատումք, ըստոնցից-էսատոնցից եւն.:
- <sup>5</sup> Հրաշեայ Աճառեան, Լիակատար Թերականութիւն Հայոց Լեզուի, Հտր. 2, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ, 1954, էջ 235:
- <sup>6</sup> Նոյն, էջ 195-196:
- <sup>7</sup> Գէորգ Զահուկեան, Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1972, էջ 87:
- <sup>8</sup> Աճառեանը կարծում է, թէ իսոր, իտոր, ըստոր, ըստուր եւ արդ կարգի միւս սեռականները առաջացել են գրաբարեան այսր, արդը, արծը ձեւերից, եւ բարբառապին ձեւերում ու եւ ու ձախնաւրները ներմուծուած են ներդաշնակութեան համար եւ իրար հետ կապ չունեն (Աճառեան, էջ 227-230):
- <sup>9</sup> Հարիբեան, Հայ Բարբառագիտութիւն, էջ 386:
- <sup>10</sup> Աճառեան, էջ 227:
- <sup>11</sup> Նոյն, էջ 228:
- <sup>12</sup> Հարիբեան, էջ 347: Ի դէպ, համանման իրողութիւն եւ դերանուան հոլովման մէջ դիտարկել է եւ Աճառեանը վանի բարբառում:
- <sup>13</sup> Աճառեան, էջ 198
- <sup>14</sup> Նոյն, էջ 231:
- <sup>15</sup> Նոյն, էջ 174:
- <sup>16</sup> Նոյն, էջ 181:
- <sup>17</sup> Հարիբեան, էջ 157:
- <sup>18</sup> Զահուկեան, էջ 88-99:
- <sup>19</sup> Աճառեան, էջ 228:
- <sup>20</sup> Նոյն, էջ 229:
- <sup>21</sup> Նոյն:
- <sup>22</sup> Նոյն, էջ 230:
- <sup>23</sup> Հարիբեան, էջ 157:
- <sup>24</sup> Նոյն, էջ 158:
- <sup>25</sup> Նոյն:
- <sup>26</sup> Նոյն:
- <sup>27</sup> Նոյն, էջ 159:
- <sup>28</sup> Երբեմ արդ ընկնում է:
- <sup>29</sup> Նոյն, էջ 153:
- <sup>30</sup> Ս. Հ. Բաղդասարեան-Թափալյեան, Մշոյ Բարբառը, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1958, էջ 96:
- <sup>31</sup> Աճառեան, էջ 188:
- <sup>32</sup> Նոյն, էջ 228:

<sup>33</sup> Թւում է, թէ ասուածին կարող են հակասել ըստու (ը-տու) սեռականը եւ դրանից կազմուած ձեւերը (ըսուց, ըսօվ, ըսոնց եւն.), սակայն նախ այս դիրքը միակն է, որտեղ ըին յաջորդում է մէկ բաղաձայն (ուստի այն չէր կարող խանգարել ընդհանուր օրինաչափութեանը), եւ բացի այդ՝ տի հպման ամենափոքր երկարաձգումն իսկ կարող է ընկալուել իրրեւ ըստ-տու օրինաչափ վանկակառոյց:

## THE CHARACTERISTICS OF DEMONSTRATIVE PRONOUNS IN ARMENIAN DIALECTS

(Summary)

VICTOR KATVALIAN

The author examines the development of two groups of demonstrative pronouns in Armenian dialects, namely *ays*, *ayt*, *ayn* and *sa*, *ta*, *na*.

He highlights the fact that unlike the *ays*, *ayt*, *ayn* demonstrative pronouns that exist in all Armenian dialects in their original or variegated forms, several dialects lack the the *sa*, *ta*, *na* demonstrative pronouns.

The author notes that the *ays*, *ayt* *ayn* pronouns have more versions, are more numerous in their construction details and possess more grammatical features in the dialects than the *sa*, *ta*, *na* pronouns. After analysing this diversity, the author concludes that the causes of this difference have their roots in classical Armenian, *Grabar*.

The author examines the absence of the *sa*, *ta*, *na* pronouns in several dialects and notes that in a number of dialects these evolved into new combined or mixed forms.

The author traces back *grabar* features in the dialect forms of these demonstrative pronouns and examines both phonetic and other influences that have led to such a multiplicity of versions and variables in the evolution of these six demonstrative pronouns.

